Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Պ-792-19.05.2015-ՄԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածը «լուծարման, գործունեության» բառերից հետո լրացնել «կասեցման, » բառով:

Հոդված 2. Օրենքի 25-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2.1-րդ մասով.

«2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում մեկ անձի կողմից կուսակցությանը նվիրված անշարժ գույքի արժեքը չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհազարապատիկը: *Կուսակցությանը նվիրատվության կարգով տրվող անշարժ գույքը չի կարող օտարվել նվիրատվության օրվանից առնվազն հինգ տարվա ընթացքում:*».

2) 4-րդ մասի *«2-րդ»* բառը փոխարինել *«2-րդ կամ 2.1-րդ»* բառերով:

Հոդված 3. Օրենքի 6-րդ գլխի վերնագրում «և գործունեության արգելումը» բառերը փոխարինել «, գործունեության կասեցումը և արգելումը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 30-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝

«**Հոդված 30. Կուսակցության գործունեության կասեցումը կամ արգելումը**

1. Կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել սահմանադրական դատարանի որոշմամբ:

2. Կուսակցության գործունեության կասեցման կամ արգելման հարցով, սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված հիմքերով, սահմանադրական դատարան կարող են դիմել

Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 1-ին մաս	«Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 2.1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում մեկ անձի կողմից կուսակցությանը նվիրված անշարժ գույքի արժեքը չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուր հազարապատիկը: Կուսակցությանը նվիրատվության կարգով տրվող անշարժ գույքը չի կարող օտարվել նվիրատվության օրվանից առնվազն հինգ տարվա ընթացքում»:	Ընդունված է:
ՀՀ կառավարություն	2-րդ հոդվածի 2-րդ մաս	Անհրաժեշտ է հանել «դեպքում» բառը:	Ընդունված է այլ խմբագրությամբ: Հանվել են «Սույն հոդվածի» և «սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ստացման դեպքում» բառերը: